



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 նոյեմբերի 2013թվականի N 24-Ն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ
ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի
Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով
հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝
նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության
(տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝
հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական
բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես
նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և
արտադրական նշանակության օբյեկտների համար՝ (կիրառվում է 0.5 գործակից) -
----- 7500 դրամ.

- 2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
 - ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար՝ -7500 դրամ,
 - բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար՝ 25 000 դրամ,
 - գ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար՝ 25 000 դրամ,
 - դ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար՝ - 50 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ --
----- 1000 դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար՝ ----- 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական
այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման,
արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության
թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով
հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային

չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ -----1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, աճյա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել -----2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ողելից և ավրոհողային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ -----2000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար -----

-----350 դրամ՝ 1քառ.մ համար 2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել -----150 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝ -----45 000 դրամ.

ա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ --3000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ -300 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները

(սառնաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ -----
30 000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ -----
---75 000 դրամ.

3) բաղնիքների (սառնաների) համար՝ -----
250 000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ -----
-500 000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ -----
---250 000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ -----
--110 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ -----
-----1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ -----
-----2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ -----
---500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ -----
-----700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ ---
-----1 000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել -----100 000 դրամ:

9: Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 3 000 դրամ:

10. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը կիրառված է 0.5 գործակցով:

11. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ ----- 5000 դրամ

12. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափազրական և այլ նման

աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

1) մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝
յուրաքանչյուր քմ. մակերեսի համար -----
----- 50 դրամ

13. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝
մասնակիցներից վճար սահմանել՝----- 1000 դրամ:

14. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում
անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ)
բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական -----
-----10դրամ:

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ
խորհանարդ մետր աղբի համար՝ ամսական -----
-----1000 դրամ:

3) շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման
համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող
թույլտվության վճար սահմանել -----
-----500 դրամ:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

2. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ


3. ԿՑԱԶՈՒՄՅԱՆ ՄԵՐԺ

4. ՂԱԶԱՄԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՍ

Համայնքի ղեկավար՝

ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ



Handwritten signatures of the five council members and the community leader, corresponding to the names listed to the left.